ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/17.1/86-2022

05 01

«.....».....2022թ.

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**
(ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ)
էլ փոստ՝ foi@foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 348-43 հարցմանը՝ հայտնում ենք հետևյալը.

1-ին հարցի կապակցությամբ նշենք, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) վարում է ստացված հարցումների վերաբերյալ ամփոփ տվյալների վերաբերյալ վիճակագրություն:

2-րդ հարցի կապակցությամբ նշենք, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2020 թվականի մարտի 11-ի N 175-Ա հրամանի 11-րդ հավելվածի համաձայն՝ վերոնշյալ վիճակագրության հաշվառման, մշակման դրանց հետ կապված այլ աշխատանքների իրականացման գործառույթը վերապահված է Նախարարության գործերի կազմակերպման վարչությանը:

3-րդ հարցի կապակցությամբ նշենք, որ Նախարարության գործերի կազմակերպման վարչությունն իրականացնում է Mulberry համակարգով, էլեկտրոնային փոստով, փոստով, սուրհանդակային ծառայության միջոցով, առձեռն և այլ եղանակներով ստացված գրությունների, դիմումների և այլ փաստաթղթերի սահմանված կարգով գրանցման, հաշվառման, առաքման, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության վերաբերյալ

վիճակագրական տվյալների և այլ տեղեկատվության մշակման գործառույթները: Հետևաբար, Նախարարությանն ուղղված հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ կամ անհրաժեշտ այլ տեղեկությունները տնօրինում է Նախարարության գործերի կազմակերպման վարչությունը:

4-րդ հարցի կապակցությամբ ներկայացնում ենք Նախարարությանն ուղղված հարցումների և դիմումների վիճակագրության վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության ակտիվ հղումները՝

-https://hti.am/main.php?lang=1&page_id=558

-https://www.facebook.com/photo?fbid=258283959743912&set=a.220197846885857

5-րդ հարցի կապակցությամբ նշենք, որ Նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է հանդիսանում նախարարի մամուլի քարտուղարը, ով մասնակցել է՝

- «Տեղեկատվության ազատությունը և փաստերի ստուգումը համավարակի ընթացքում» խորագրով աշխատանքային քննարկմանը,
- «Իրական սեփականատերերի թափանցիկություն» թեմայով աշխատանքային քննարկմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

1/5/2022

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770393

Կատ. իրավաբանական վարչություն
Գոհար Մամյան 010 590029

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am